ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«04» 08 2023թ.
№ պետ/12-1042

«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ տնօրեն
Վ. Եղիազարյանին
ՀՎՀՀ 03804898
ՀՀ, Արարատի մարզ, ք. Մասիս 1 փողոց,
հեռ. 091 196-249

ՀՀ պաշտպանության նախարարության և «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ միջև 08.05.2023թ. կնքվել է N ՓՊՄԱՊՁԲ-23-7/29-3 գնման պայմանագիր (այսուհետև՝ Պայմանագիր) «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի հիման վրա՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում համաձայնագիր կնքելու միջոցով: Համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո 04.07.2023թ. վերոնշյալ մասնակցին սահմանված կարգով ծանուցվել է համաձայնագիր կնքելու վերաբերյալ: Սահմանված ժամկետում մասնակիցը չի կնքել համաձայնագիրը և պայմանագրի և որակավորման ապահովումը չի փոխարինել բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով:

Հիմք ընդունելով վերոնշյալ Պայմանագրի 8.14 կետը ՀՀ պաշտպանության նախարարությունը **2023թ. օգոստոսի 4-ին** միակողմանի լուծել է Պայմանագիրը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ՝ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է **2 896 986 ՀՀ *դրամ,*** որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900005000758** հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը կազմում է **4 345 479 ՀՀ դրամ,** որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900008000664** հաշվեհամարին:

Տեղեկացնում եմ նաև, որ ՀՀ պաշտպանության նախարարությունը միաժամանակ ձեռնարկում է միջոցներ՝ «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ կողմից բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման գումարի գանձման ուղղությամբ, որը կազմում է **1 448 493 *ՀՀ դրամ:***

Միաժամանակ տեղեկացնում եմ, եթե մինչև 2023թ. օգոստոսի 16-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված ***2 896 986 ՀՀ դրամ՝*** պայմանագրի կատարման ապահովման և **4 345 479 ՀՀ դրամ՝** որակավորման ապահովման գումարները, ինչպես նաև գանձվի հայտի ապահովումը, ապա «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև 2023թ. օգոստոսի 16-ը ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2071 սենյակ:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ